ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2022 թվականի N 1073 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 284-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Լիազորած պետական մարմին ճանաչելու, սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևը, սոցիալական ապահովության հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալների ցանկը և սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները սահմանելու մասին» N 284-Ն որոշման՝

1) 3-րդ կետի 9-րդ ենթակետում «թվականի -- ի N-- Լ » բառերը փոխարինել «թվականի դեկտեմբերի 23-ի N 2169-Լ» բառերով.

2) հավելվածի 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախա-դասությամբ.

«Բանկային հաշվի պայմանագիրը շահառուի անունից կարող է կնքել կամ շահառուի անվամբ բացված սոցիալական ապահովության բանկային հաշվին առկա

միջոցները դուրս գրելու կարգադրություն բանկին կարող է ներկայացնել նաև այլ անձ, եթե՝

1) վերջինս բանկ է ներկայացնում շահառուի տված՝ նոտարական կարգով վավերացրած կամ դրան հավասարեցված համապատասխան լիազորագիր կամ

2) շահառուն լիազորագիրը տվել է բանկում՝ բանկի ներքին ընթացակարգերով սահմանած կարգով։».

3) հավելվածը 6-րդ կետից լրացնել հետևյալ բովանդակությամբ 6. 1-ին կետով.

«6.1. Եթե սույն հավելվածի 6-րդ կետում նշված լիազորագիր տալուց հետո նոր լիազորագրի կամ հայտարարության միջոցով (տրվում է 6-րդ կետում նշված եղանակներից մեկով) շահառուն բանկին տեղեկացնում է լիազորագրի գործողության դադարեցման վերաբերյալ, ապա սույն կետում նշված տեղեկատվությունը բանկին ներկայացնելու օրվանից շահառուի անվամբ բացված սոցիալական ապահովության բանկային հաշվին առկա միջոցները չեն կարող դուրս գրվել 6-րդ կետում նշված լիազորված անձի կարգադրության հիման վրա։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ